ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կամարիս համայնք,
գ.Կամարիս , kamarisgyuxapetaran@mail.ru

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

N 144
10 օգոստոս 2018թ.

Ձեզ ենք ուղղարկում Կամարիս համայնքի ավագանու 2018թ օգոստոսի 09-ի թիվ 9 նիստի որոշումները :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք, հեռախոս. 0222-6-77-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» ՕԳՈՍՏՈՍ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 46

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝
Համայնքի ավագանին ո ր ո շ ո ւ մ է

Հաստատել համայնքի ավագանու 2018թվականի օգոստոսի 9 -ի թիվ 9 նիստի հետևյալ օրակարգը

1. Համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի N << Հաստատել Կամարիս համայնքի 2018թ բյուջեն>> 59-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Համայնքի ղեկավարի 2017թ հաշվետվությունը համայնքի հնգամյան զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ :
3. Երիտասարդական խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի առաջադրման մասին:
4. Համայնքի 2018 թվականի սուբվենցիայի ծրագրին մասնակցության մասին :

Կողմ (7) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՂՈՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ՅԱՐՈՍԼԱՎ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՍՈՒՔԱՍՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՊԱՆՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք., հեռախոս, 0222-6-77-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» ՕԳՈՍՏՈՍ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 47-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N59-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով , ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով , համայնքի ավագանին որոշում է,

1 Համայնքի ավագանու 2017թ դեկտեմբերի 22-ի N «Հաստատել Կամարիս համայնքի 2018թ բյուջեն» 59-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն:

1.1 Համայնքի 2018թ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 11-1-2 4891 հոդվածի 2850.0 հազար դրամից 300.0հազար դրամը տեղափոխել 8-2-3 4251 հոդված :

Կողմ (7) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՒՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ՋՈՒՄՇՈՒԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՊԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք., հեռախոս, 0222-6-77-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 թվականի N 49

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆՁԱՄԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2018 թվականի հուլիսի 11-ի N 01/13.2/3130-18 գրությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրել Անի Ավագի Ռոստոմյանին:

Կողմ (7) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵԼՈՒՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ՋԱՐՋԱՆՈ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՂԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք, հեռախոս, 0222-6-77-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 48

ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն .Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին որոշում է:

Ընդունել ի գիտություն Կամարիս համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2017թվականի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ համաձայն հավելվածի:

Կողմ (7) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱ ԵՆՈՔՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ԶԱՐԶԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Կամարիս համայնքի ավագանու
2018թվականի օգոստոսի 29-ի
N 48 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԿԱՄԱՐԻՍ 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի փետրվարի 14-ին Կուրայքի մարզի Կամարիս համայնքում տեղի ունեցավ համայնքի զարգացման ինգամյա ծրագրի (այսուհետ ՀԶՀԾ) իրականացման 2017թվականի տարեկան հաշվետվության քննարկման հանրային բաց լսումները:

Հանրային բաց լսումներին ներկա էին համայնքի ղեկավարը, համայնքի աշխատակազմը, ավագանու անդամները, համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակազմները, համայնքի ազգաբանկչությունը:

Բացման խոսքով ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Գոռ Հակոբյանը . մասնավորապես նշելով, որ հանրային բաց լսումների նպատակն է 2017թվականին ՀԶՀԾ-ի իրականացման ընթացքի մասին համայնքի ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկումն է, ինչպես նաև նրանց կարծիքների հավաքումն ու դրանց հիման վրա ՀԶՀԾ-ի հետագա տարիների ծրագրերի, ծառայությունների ու միջոցառումների վերանայման աշխատանքների իրականացումն է:

ՕՐԱԿԱՐԳԸ

1) Համայնքի տեսլականի սահմանում
2) Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում
3) Համայնքում իրականացված ոլորտային ծրագրերի և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակների ներկայացում
4) Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում և գնահատում

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ.

. Կամարիս համայնքը բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ, փոքր և միջին ձեռնարկատիրությամբ, ինչպես նաև բնակչության զբաղվածությունն ապահովող համայնք է, որտեղ մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ հանրային բոլոր ծառայությունները՝ նախադպրոցական և արտադպրոցական կրթություն և դաստիարակություն, մշակութային, սպորտային ծառայություններ և այլն:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի, Կամարիս գյուղը գտնվում է Երևանից 30 կմ հեռավորության վրա հարավ -արևելյան մասում, ծովի մակերևույթից 1520մ բարձրության վրա: Կամարիս գյուղը հիմնադրվել է 1820թվականի նախկին Կոտայքի շրջանի Գյամրեզ գյուղի բազայի հիման վրա:1976թ գյուղը վերանվանվել է Արովյանի շրջան գյուղ Կամարիս Այժմ գյուղը գտնվում է Կոտայքի մարզի վարչական կազմի մեջ և գտնվում է մարզկենտրոնից 45 կմ հեռավորության վրա:

2.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2018թվականի հունվարի 1-ի դրությամբ Կամարիս համայնքում ապրում է 2402 բնակիչ, որոնցից տղամարդիկ կազմում են 49.8%-ը:

Աղյուսակ 1.

Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները
(01.01.2018 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	2018
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	2402
	Տղամարդիկ	1198
	Կանայք	1204
	0-6 տարեկան երեխաներ	189
	7-17 տարեկան դպրոցականներ	501
	18-62տարեկան	784
	63 և բարձր	260
2.	Թոշակառուներ	280
3.	Աշխատունակներ	600
4.	Գրանցված աշխատողների թիվը	150
5.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	0
6.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	13
9.	Փախստականներ	0
10.	Գործազուրկներ	180
11.	Զբաղվածներ	800
12.	Հաշմանդամներ, այդ թվում՝	114
	Մանկուց հաշմանդամներ	15

13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	33
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	4
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	15
	Անօթևան ընտանիքներ	0
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	200
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	12
18.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	125

Համայնքն ունի 560 տնային տնտեսություն: Վերջին տարիներին նկատվում է ծնելիության աճ:

2.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Կամարիս համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 7 անդամներով: Կամարիս համայնքի աշխատակազմը բաղկացած է 14 աշխատակցից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը հիմնանորոգվել է 2014 թվականին: Աշխատակազմի աշխատանքի կատարման համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով, որը լիովին բավարար է աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար:

Համայնքի ենթակառուցվածքներն են՝

- ✓ Կամարիսի համայնքի «ԿԱԿԱՉ» -մասնակապարտեզ ՀՈԱԿ- 17 աշխատակից:

3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ և ՀՋՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

3.1 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կամարիս համայնքը 2017թվականին տրվել է 3 շինարարության թույլտվություն, սա վկայում է այն մասին, որ համայնքը միշտ զարգացման ընթացքում է: 2017 թվականին ավարտին հանձնվեց համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի կազմումը, որի համար ծախսվել է 5200.0 հազ. դրամ, որի արդյունքում ինչպես նաև համայնքն արդեն իսկ ունի քաղաքաշինական քարտեզ:

Կամարիս համայնքում շաբաթական երկու անգամ իրականացվում է աղբահանության աշխատանքներ, մաքրվում են համայնքի փողոցները:

2017թվականին համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման նպատակով ծախսվել է շուրջ 3750.0հազար դրամ: Կամարիս համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի N 54-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կամարիս համայնքի վարչական տարածքից ոչ կենցաղային և խոշոր եզրաչափերի աղբի հավաքման և տեղափոխման թույլտվության տրամադրման պայմանների և աղբահանության վճար վճարողների հաշվառման» կարգը, համաձայն որի 2017 թվականի ընթացքում համայնքի բնակիչների և համայնքի տարածքում գործող 15 կազմակերպությունների հետ կնքվել է աղբահանության պայմանագրեր: Համայնքում առկա է ջրմուղու 8 կմ, կոյուղու 3 կմ, իսկ ոռոգման ջուրը մատակարարվում է 6 կմ կիսախողովակային, 12 կմ փակ և մոտ 7-8 կմ հողային առունկի ցանցով: Չնայած այսքանով հանդերձ ոռոգման համակարգում կորուստները կազմում են 65 %:

2017թվականի իրականացվել է 3 խոշոր ներդրումային ծրագիր՝

1. 2017թ սկսվել է համայնքում ներդրումային ծրագրով Ջերմատնային տնտեսություն, որի նախահաշվային արժեքը կազմել է դրամ 4 350 000.0հազ.դրամ:

2017թվականին կատարվել է 15.0 հազար դրամի կոյուղագծերի մաքրման աշխատանքներ: Համայնքն ունի 2 գերեզմանատուն յուրաքնաչյուր ընտանիքին բաժին է ընկնում միջինը 12-15 քմ գերեզմանահող:

Համայնքն ունի 2 գերեզմանատուն:

3.3 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

2017թվականի հուլիսի 1-ի դրությամբ համայնքի հողային տարածքը կազմում է 3768 հա, որից

- Վարելահող- 955.56հա
- Խոտհարք-305.45 հա
- Արոտավայրեր-1412.32 հա
- Բազմամյա տնկարկներ – 1.96հա
- Բնակավայրերի հողեր – 127.82հա
- Ջրային ֆոնդի հողեր – 15.8հա
- Այլ հողեր – 887.1հա
- Արդյունաբերական հողեր- 15.98հա
- Գյուղ արտադրական հողեր-35.82հա
- Էներգետիկայի, կապի տրանսպ. կոմունալ ենթ. հողեր-3.61 հա

Հողերի սեփականաշնորհմանը մասնակցել է 430 ընտանիք, մեկ հողաբաժնի չափը կազմել է 0.8 հա, բնակավայրի տարածքը կազմում է 127.82 հա:

3.4 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կամարիս համայնքում գյուղացիական տնտեսությունները զբաղված են դաշտավարությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ, ընդհանրապես

գյուղատնտեսության բնագավառում զբաղված է համայնքի բնակչության 31 %-ը: Համայնքում 2018թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա է 1238 խոշոր եղջրավոր անասուններ, որից կովեր ՝ 552 գլուխ, 1080 գլուխ խոզեր, 670 գլուխ ոչխարներ և 1860գլուխ թռչուններ և250 հատ մեղվաընտանիք: Համայնքի գյուղացիական տնտեսությունները զբաղված են , ցորենի, գարու, բազմամյա խոտաբույսերի, ինչպես նաև բանջարաբոստանային մշակաբույսերի արտադրությամբ:

Ընդհանուր առմամբ համայնքում 2017թվականին արտադրվել է

հացահատիկ- 2760 ցենտներ-327 հա

կարտոֆիլ – 40ցենտներ-3 հա

բանջարեղեն –2355ցենտներ-23 հա

պտուղ - հատապտուղ – 1470ցենտներ-52հա

կուտակվել է խոտ – 4600ցենտներ

կուտակվել է ծղոտ – 2000 ցենտներ

ցանվել է աշնանացան-60 հա, որից՝

հացահատիկային մշակաբույսեր-60 հա

Հողերը համարվում են ոռոգվի հողատարածություններ: Համայնքում արոտավայրերը մեծամասամբ գտնվում են դարավանդների վրա: Դաշտամիջյան ճանապարհները, որոնք համայնքում կազմում են 40-50 կմ: Գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար համայնքում առկա է 7 տրակտոր, 54 բեռնատար-ավտոմքեքներ, 6 կցասայլեր,4 տրակտորային խոտհնձիչներ, 5 մամլիչ-բարդոնիչներ, 5 գութան, 2 շարքացան, սակայն ողջ տեխնիկան համայնքին մնացել է դեռևս խորհրդային ժամանակաշրջանից, որն էլ և՛ ֆիզիկապես, և՛ բարոյապես մաշվել է:

3.5 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2017թվականին կատարվել է 1180.0 հազար դրամի ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ::

3.6 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կամարիս համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից համայնքում առկա է 5 առևտրի օբյեկտներ:

Առևտրի և սպասարկման ոլորտներում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 12 մարդ:

3.7 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի մեկ նախադպրոցական հաստատություն, որի հզորությունը նախատեսված է 120 երեխաների համար, սակայն 2017թվականին հունվարի ամսին մսուր մանկապարտեզ են հաճախել շուրջ 120 երեխա՝ 4 խումբ, որոնց սպասարկում են 17-աշխատողներ՝ 4 մանկավարժ, 4 դայակ և 7 սպասարկող անձնակազմ:
2017թվականին համայնքը նախադպրոցական հաստատությանը սուբսիդավորել է 21433,9 մլն դրամ: 2017թվականի համայնքի կողմից 1-ին դասարան հաճախող 25 երեխաներին նվիրել է պայուսակներ, իրենց գրենական պիտույքներով, իսկ ամանորին արդեն իսկ ավանդույթ դարձած շուրջ 650 նվերներ "Մշակույթի կենտրոնի կողմից կազմակերպված միջոցառման ժամանակ բաժանվել է 1-3 դասարանի և մանկապարտեզի երեխաներին:

Համայնքն ունի մեկ միջնակարգ դպրոց, որտեղ 2017թվականին սովորել են 270 երեխա, աշխատում են 30 ուսուցիչներ և 10 սպասարկող անձնակազմ: Համայնքի դպրոցը գտնվում է անմխիթար վիճակում, կարիք ունի հիմնանորոգման որի մասին բազմիցս հարցը բարձրացվել է Կառավարության մաշտաբով :

3.9 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Կամարիս համայնքում հիմնովին վերանորոգվել է Մշակույթի շենքի մի հատվածը, 8300.0հազ.դրամ արժողությամբ, որտեղ գործում է կարատեի, ժողովրդական պարի և երգի, դաշնամուրի, ժողովրդական գործիքների խմբակներ: Այստեղ սովորում են շուրջ 80 երեխա, որոնց սպասարկում են 6 աշխատակիցներ: Այստեղ տարվա ընթացքում կազմակերպվում է շուրջ 13-15 միջոցառումներ նվիրված միջազգային, հանրապետական և համայնքային բոլոր տոներին: Մշակույթի տան սաները 2017թվականին մասնակցել են բազմաթիվ մարզային, հանրապետական մրցույթ փառատոններին՝ զբաղեցնելով 1-2 տեղը: Համայնքապետարան վարչական շենքում է գտնվում նաև համայնքի գրադարանը, որտեղ կա շուրջ 6200 կտոր գրականություն և 2017թվականին ունեցել է 182 ընթերցող: Համայնքն ունի kamaris.am ինտերնետային վեբ կայքը, որտեղ տեղ է գտնում համայնքային նորությունները, համայնքում իրականացվող բոլոր միջոցառումները, համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու կողմից կայացված բոլոր որոշումները,

կարգադրությունները, համայնքի բյուջեի ծախսային և եկամտային մասերը և դրանց տնօրինումն ըստ կատարման ժամկետների, ինչպես նաև հայտարարություններ:

3.10 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա, որտեղ աշխատում են 1 բժիշկ և 2 բուժքույր, իսկ այցելուների թիվը 2017թվականի ընթացքում կազմում է 2250 մարդ, 2017թվականի ընթացքում համայնքում ծնվել է 28 երեխա, շենքը ամբողջովին վերանորոգված է:

3.11 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքն ունի 15.5 հա հուշարձանների տարածք, որտեղ կառուցված է Հայրենական մեծ պատերազմի զոհվածների հուշարձան-կոթող, Սուրբ Հովհաննես,, հայ առաքելական եկեղեցին և մի շարք մատուռներ : Վերջինս մինչև 2020 թվականի ավարտը նախատեսվում է ավարտել ,,Սուրբ Հովհաննես,, հայ առաքելական եկեղեցու հիմնանորոգման աշխատանքները որի նախագծային արժեքը կազմում 82000.0հազ.դրամ: 2017թվականի համայնքում տեղադրվեց Ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածներին նվիրված խաչքար-հուշակոթող:

3.12 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում չկան աշխատանքի և սոցիալական ծառայության գործակալություններ: Բնակիչները հիմնականում աշխատանք են փնտրում Երևան և Աբովյան քաղաքում, իսկ սոցիալական ծառայությունը գտնվում է Աբովյան քաղաքում, որը համայնքից հեռու է 8 կմ: Համայնքում նպաստ ստացող ընտանիքների թիվը 2017թվականին կազմում է 33 ընտանիք: 2017թվականին համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին և համայնքում նոր ծնված երեխանին տրամադրվել է 3930.0 հազար դրամի դրամական օգնություն:

3.13ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Կամարիս համայնքի բնակչությունը մասնակցում է տեղական ինքնակառավարման աշխատանքներին: Համայնքում կատարվող յուրաքանչյուր խոշոր ներդրում, ինչպես նաև համայնքի զարգացման ծրագրերը, համայնքի բյուջեի կատարողականը, քաղաքաշինական ծրագրերը կյանքի կոչելուց առաջ համայնքում կատարվել է հանրային բաց լսումներ և հաշվի են առնվել համայնքի բնակչության կարծիքը, 2017թվականին կատարվել են 3 հանրային քննարկումներ: Բացի դրանից համայնքի www.kamaris.am վեբ կայքի, ինչպես նաև համայնքում տեղադրված հայտարարությունների ցուցատախտակներին: 2017թվականին համայնքի

ղեկավարի կողմից կայացվել է 114 որոշում, 19 կարգադրություն, համայնքի ավագանու կողմից գումարվել է 13 նիստ, որոնց ընթացքում կայացվել է 61 որոշում: Կամարիս համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 14-ի N 16-Ն հաստատվել է «Կամարիսի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը», 2016 թվականի ապրիլի 14-ի N 17-Ն և 18-Ն որոշումներով հաստատվել է «Կամարիս համայնքում հանրային քաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը», «Կամարիս համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության» կարգը, որով համայնքի բնակչությունը մասնակցում է համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման), համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների կատարման գործընթացներին:

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում 2015թվականի իրականացվել է շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության կազմակերպումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով: Աղետների ռիսկերի կառավարման համար, Կամարիսի համայնքի ղեկավարի 2016 թվականի հունվարի 16-ի N 6-ի որոշմամբ ստեղծվել է ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի բնակչության տարահանման պլան, որը երկողմանի հաստատվել է նաև ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության կողմից:

Ո՞Ր ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԵՆ ԾԱԽՍՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հ/հ	ՈԼՈՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ)	ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ (%)
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	60037,3	100.0 %
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	25660,8	42.7 %
2.	Պաշտպանություն	0,0	0.0 %
3.	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0,0	0.0 %
4.	Տնտեսական հարաբերություններ	550.0	0.9%
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	4790.0	8.0 %
6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	1525.0	2.5%
7.	Առողջապահություն	0.0	0.0 %
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն	2446.8	4.0 %
9.	Կրթություն	21133.9	35.2%
10.	Սոցիալական պաշտպանություն	3930.0	6.5 %
11.	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	8.0	0.0 %

Ի՞ՆՉ ՏԵՍԱԿԻ ԾԱԽՍԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ 2017թ. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ.ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք, հեռախոս, 0222-6-77-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՕԳՈՍՏՈՍ 2018ԹՎԱԿԱՆԻ N 50-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, *Համայնքի ավագանին որոշում է.*

Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից 2018թվականին սուբվենցիայի տրամադրման ծրագրին համայնքի մասնակցությանը:

Կողմ (7) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԽԱՉԱՏՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ՋԱՐՅԱՆԻ ԳԵՎՈՐՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ԳՆԵԼ ԳԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՏԿԶՆ պաշտոնական օգտագործման համար			
Սուբվենցիայի հայտի գրանցման ամսաթիվը		Հաշվառման համարը	
Սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ծրագիր		Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կցվում են	
Տնտեսական զարգացման ծրագիր		Հայտը պատշաճ կերպով կազմված և ստորագրված է	
Սարք-սարքավորումների ձեռքբերման ծրագիր		Պահանջվող այլ փաստաթղթեր կցված են	
		Հայտը համաձայնեցված է համապատասխան մարզպետարանի հետ և համապատասխանում է 5 ամյա զարգացման ծրագրին	

ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային

ՀԱՅՏ

Ծրագրի անվանումը	Կամարիս համայնքի խորքային հորի հորատում
Մարզ	Կոտայք
Համայնքը/համայնքները	Կամարիս
Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից	25կմ
Համայնքի 2018 թվականի բյուջեն	83500000 ՀՀ դրամ
Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի, խմբի և դասի անվանումն ու համարը, որին դասվում է ծրագիրը	
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Կամարիս համայնքը զբաղեցնում է 3650 հա տարածք, բնակչությունը 2018թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2400 մարդ: Համայնքում բնակչությունը տեղաբաշխված լինելով շուրջ 128 հա-ի վրա, նրանց սպասարկում է շուրջօրյա

	ջրամատակարարմամբ, բայց քանի որ աղբյուրները բնակլիմայական պայմաններից ելնելով ցամաքում են, իսկ համայնքն էլ չունի ոռոգման ջուր, համայնքում ջրմատակարարման համակարգը ունի մեծագույն խնդիր: Ներկայումս համայնքի գերակա խնդիրներից է համայնքի ոռոգման ջրով ապահովելը : Կամարիս համայնքը լինելով Աբովյանի տարածաշրջանի չորրորդ համայնքը բնակչության թվով՝ բնակեցված է մոտ 95%-ով: Քանի որ համայնքը ունի ոռոգման խնդիր , խմելու Ջրի քանակը չի բավականացնում համայնքի բնակչությանը;
Ծրագրի իրականացման նպատակը	Ծրագրի իրականացման նպատական է Կամարիս համայնքի ջրամատակարարման աշխատանքներ, որն իր մեջ կներառի խորքային հորի հորատում: Այս ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կունենա ոռոգման ջուր, որը կնպաստի բնակիչների 11.7հա տնամերձ այգիների մշակմանը: Կնպաստի նաև համայնքի բյուջեի աճին, բնակչության թվի ավելացմանը, և որն ամենակարևորն է կապահովի բնակչության ոռոգման ջրով և նպաստի խմելու ջրիտնտեսմանը: Ծրագրի ներդրման նպատակն է նաև նպաստել համայնքում փոքր և միջին ձեռներեցության զարգացմանը, բնակիչների ապրելակերպի բարելավմանը:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	Նշված ծրագրի իրականացման արդյունքում կավելանա ջրային ցանցի արժեքը: Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	Ակնկալվող արդյունքները • Ունենալ ոռոգման ջուր՝ • Ապահովել բնակչության ոռոգման ջրի խնդիրը 30% • Բնակչության թվի ավելացում 20% • Համայնքի սեփական եկամուտների ավելացում՝ յուրաքանչյուրի տարի՝ 15% • Փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության զարգացում յուրաքանչուրի տարի 15 %
Ծրագրի յուրաքանչյուր արդյունքի հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները	Կամարիս համայնքում կառուցել անհատական տներ, ավելացնել փոքր և միջին ձեռներեցությունը, որն էլ կնպաստի գույքային բազայի միավորի և սեփական եկամուտների ավելացմանը, աշխատատեղերի ստեղծմանը: Համայնքի բնակիչների զբաղվածության մեծամասնությունը գերակշռում է անասնապահությունը և հոգագործությունը: Համայնքն ունի խոշոր ֆերմերային տնտեսություններ, իսկ ջրագծի կառուցումը կնպաստի ֆերմերային տնտեսությունների զարգացմանը, ինչպես նաև կստեղծվի նոր աշխատատեղեր, համայնքում կներդրվի կաթի վերամշակման արտադրամասեր:
Ծրագրի ազդեցությունը շահառուների վրա	Ծրագրի շահառուներն են Կամարիս համայնքի բնակչությունը-100%, փոքր և միջին ձեռնարկությունները՝ 20% Ծրագրի իրակացման արդյունքում

	➢ Ոռոգման ջրի ապահովում 80% ➢ Ձեռնարկատիրական գործունեության բարելավում 30%
Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող հիմնական աշխատատեղեր	Այս ծրագրի շրջանակներում կստեղծվի շուրջ 5-12 աշխատատեղ՝ փոքր և միջին ձեռնարկություններում: Համայնքն ունի խոշոր ֆերմերային տնտեսություններ, իսկ խորքային հորի և ջրագծի կառուցումը կնպաստի ֆերմերային տնտեսությունների զարգացմանը, ինչպես նաև կստեղծվի նոր աշխատատեղեր՝ մոտ 15-25 աշխատատեղ, համայնքում կներդրվի կաթի վերամշակման արտադրամասեր:
Ծրագրի սպասվող միջնաժամկետ և երկարաժամկետ արդյունքները	Ծրագրի իրականացման միջնաժամկետ արդյունքը դա համայնքապետարանի կողմից ծախսվող ոռոգման ջրի հորքային հորատման արդյունքում գումարների տնտեսումն է(շուրջ 3500000 ՀՀ դրամ տարեկան), որը երկարաժամկետ արդյունքի վերածվելու դեպքում այն բյուջեի վարչական մասից կհատկացվի ֆոնդային մաս այլ կապիտալ ծրագրերի իրականացման նպատակով, իսկ երկարաժամկետ արդյունքը դա բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, ոռոգման ջրին ապահովումը, փոքրիշատե նաև խմելու ջրի խնդրի լուծումը, ձեռներեցության զարգացում, համայնքի սեփական եկամուտների տարեց տարի ավելացումը:
Համայնքի 2017 թվականի բյուջեն և բյուջեի կատարողականը	Համայնքի 2017թ.-ի բյուջեի կատարողականը /մլն դրամ/ Բյուջեի եկամուտների և ծախսերի անվանումը — Պլան — Փաստացի — Տոկոս 1.Ընդամենը համայքնի բյուջեի եկամուտները — 60.0 — 60.2 — 102% Այդ թվում՝ 1.1Վարչական բյուջեի եկամուտներ,այդ թվում — 60.0 — 60.2 — 102% 1.2Սեփական եկամուտներ — 9.7 — 9.9 — 122% 1.3Ֆոնդային բյուջեի եկամուտներ — 12.8 — 24.3 — 100% 2.Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր, որից՝ — 95.0 — 71.6 — 82% 2.1Վարչական բյուջեի ծախսեր — 60.2 — 60.0 — 81% 2.2Ֆոնդային բյուջեի ծախսեր — 18.6 — 10.0 — 53% Համայնքի ֆոնդային բյուջեի 2017թ. փաստացի ծախսերի բացվածքը/մլն.դրամ/ Պլան — Փաստացի — Տոկոս 1.Քարտեզագրում — 3.0 — 3.0 — 95% 2.Ջրամատակարարում — 11.36 — 11.36 — 100% 3.Մշակույթի տան հիմնանորոգում — 8.3 — 8.3 — 100% 4.Ճանապարհային տրանսպորտ — 1.2 — 1.2 — 100% 5. նախ.կրթ.հաստատություն — 0.44 — 0.44 — 100%
Համայնքի 2018թվականի բյուջեն	122.6 մլն. ՀՀ դրամ 2018թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի պլանավորում Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտներ 84.500.0 մլն. դրամ որից՝ 1.1վարչական բյուջեի եկամուտներ- 66.5 որից՝ սեփական եկամուտներ- 9.946 1.2Ֆոնդային բյուջեի եկամուտներ-17.0 2.Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր որից՝ վարչական բյուջե 66.500 Ֆոնդային բյուջե-17..0

	Համայնքի ֆոնդային բյուջեի 2018թ. պլանավորված ծախսերի բացվածքը /մլն.դրամ/ 3.Ջրամատակարարում- 17.0
Համայնքի 2018թվականի բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի(ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով 2018 թվականի կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը(համապատասխան հաշվարկով)	Բյուջետային եկամուտների անհրաժեշտ մուտք 2017թ. հողի օտարումից համայնքային բյուջե է մուտքագրվել 12777000 ՀՀ դրամ 2018թ. հողի օտարումից կանխատեսվում է մուտքեր -10000000 ՀՀ դրամ
Ծրագրի ընդհանուր բյուջեն	28536000 (քսանութ միլիոն հինգ հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ 100%
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժինը	14268000/տասնչորս միլիոն երկու հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ 50%
Այլ ներդրողներ	
Ծրագրի իրականացման ժամկետները	Սկիզբը 01.09.2018թ. Տևողությունը՝ 2 ամիս Ավարտը 01.11.2018թ.
Ծրագրի ծախսերը .	Կից ներկայացվում է խորքային հորի հորատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթեր
Ամսաթիվ	

Համայնքի տնտեսական պատասխանատու Գագիկ Դանիելյան

Հեռախոս 0222/ 6-77-57/

Էլ փոստ՝ kamarisigyuxapetaran@mail.ru

Համայնքի ղեկավար ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

(անուն ազգանուն)

Հավելվածների ցանկ

1. Համայնքի ավագանու որոշումը Ծրագրին մասնակցելու վերաբերյալ
2. Համայնքի ղեկավարի կողմից ստորագրված ուղեկցվող գրություն
3. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատճենները
4. Տեղեկանք ֆոնդային բյուջեում նախատեսված գումարի մասին
5. Այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության